Մայիս 26–ի, կէսօրին, ցրւեց Սէյմը, իսկ հինգ ժամ յետոյ, նոյն սրահում գումարւեց Վրաց Ազգային Խորհրդի նիստը՝ Ն. Ժորդանիայի նախագահութեամբ, որ և բեմադրեց Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը:

Նոյն օրը, երեկոյեան, Բաթումում ստացւեց Անդրկովկասի Հանրապետութեան քայքայման և Վրաստանի անկախութեան յայտարարութեան լուրը: Ն. Ժորդանիան ու Ն. Ռամիշվիլին հեռագրում էին Չխենկելիին. «Այսօր, կէսօրից յետոյ ժամը 5–ին, Ազգային Խորհուրդը Վրաստանը յայտարարեց անկախ հանրապետութիւն: Վարչապետ է Ռամիշվիլին, արտաքին գործոց նախարար՝ Չխենկելին: Անդրկովկասեան Սէյմը յայտարարեց իրեն լուծւած, և Անդրկովկասի միութիւնը վերջացաւ»:

Յաջիլ բէյը անմիջապէս՝ մայիս 26–ի իր վերջնագիրը առանձին–առանձին ուղարկեց վրաց, հայկական և ազրբէջանեան պատւիրակներին:

*

Վրացիների վարմունքը սարսափելի կացութիւն ստեղծեց հայերի համար: Հայ հասարակութեան վրդովումը անսահման էր: Հայերը, ո՛չ առանց իրաւունքի, նենգ դաւադրութիւն ու դաւաճանութիւն էին տեսնում վրացիների վարմունքի մէջ: Նրանք զգում էին, որ մի վատ խաղ է խաղացւել իրենց գլխին: Եւ մայիս 26–ի երեկոյեան, Հայոց Ազգային Խորհուրդը, բուռն վիճաբանութիւններից յետոյ, ձայների ճնշիչ մեծամասնութեամբ, որոշեց բողոքել վրաց գործիչների ընթացքի և Վրաստանի անկախութեան դէմ: Այդ որոշումը, սակայն, չգործադրւեց յետագայ դէպքերի զարգացման հետեւանքով:

Հայ գործիչների մէջ միաձայնութիւն չկար այդ օրերին: Մայիս 26–ի նիստին մասնակցող Հ.Ազգ.Խորհրդի և Սէյմի անդամները՝ Ա.Ահարոնեան, Ստ. Մամիկոնեան, Տ. Բէգզադեան, Ա. Բաբալեան, Ռ. Տէր–Մինասեան և սոցիալիստ–յեղափոխականները վճռական կերպով դէմ էին արտայայտւում անկախութեան: Խ.Կարճիկեանը, Ս.Ցարուքիւնեանը, Աւ. Շահխաթունեանը, Ս. Վրացեանը, Ա. Երզնկեանը և ուրիշները այլ ելք չէին տեսնում, քայց եթէ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը և, առանց ուշացնելու, հայկական իշխանութեան կազմակերպումը: Բնորոշ է, որ հայ սոց.–դեմոկրատները, անշուշտ, վրացի սոց.–դեմոկրատների թելադրանքով, թունդ պաշտպաններ էին անկախութեան և չտալեցնում էին Ազգ. Խորհրդին օր առաջ կատարել անկախութեան յայտարարութիւնը: Նրանք անկախութեան մէջ էին տեսնում հայ ժողովրդի փրկութիւնը:

Այս հարցում էլ առաջին վճռական խօսքն ասողը եղաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, նրա չարքային ուժերը:

Սէյմի լուծման օրն խակ, մայիս 26–ի երեկոյեան, տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի ու թաղային կոմիտէների արտակարգ նիստը, որ ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Ի նկատի ունենալով այն, որ Անդրկ. Սէյմի ինքնացրումից և Վրաստանի